

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

*Պարտադիր ժամկետային զինծառայող Նարեկ Սասունի Գալստյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ*

### **Գ Ա Լ Ս Տ Յ Ա Ն Ն Ա Ր Ե Կ Ս Ա Ս ՈՒ Ն Ի**

*Ձորակոչվել է 2006թ. հունիսի 4-ին Թումանյանի զինկոմիսարիատից  
Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 50869 զորամաս /Մեղրի/*

#### **1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.**

ՀՀ ՊՆ թիվ 50869 զորամասի 2-րդ ՀԳ-ի 1-ին ՀՎ-ի ժամկետային զինծառայող, շարքային Ավետիս Սերոբի Ավետիսյանը խախտելով ՀՀ ՁՈւ կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի կանոնները, անփույթ ու անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելով դրանց նկատմամբ, 2008թ. մայիսի 10-ին ժամը 02-ի սահմաններում թույլատրել է նույն գումարտակի ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Սասունի Գալստյանին մուտք գործել այդ պահին պահպանության տակ գտնվող զորամասի ավտոհավաքակայանի տարածք, որն էլ բենզին հափշտակելու նպատակով մտել է բենզինի հորի մեջ և մահացել:

Փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 367 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (*Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը, որը առաջացրել է ծանր հետևանքներ*) հարուցվել է քրեական գործ: Հետազայում կայացվել և օրինական ուժի մեջ է մտել դատարանի դատավճիռ:

#### **2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.**

Ըստ Նարեկ Գալստյանի հորաքրոջ՝ Սուսաննա Գալստյանի, իր եղբոր տղան ոչ թե դժբախտ պատահարի արդյունքում է մահացել, այլ իրենց կողմից մատնանշված անձինք ուղղակիորեն մասնակցություն են ունեցել Ն. Գալստյանի մահվան գործում: Ըստ դիմումատուի, Նարեկին սպանելու նպատակով տարել են դեպի բենզինի հորը, որտեղ փակելով հերի բերանը, Նարեկ Գալստյանը շնչահեղձ է եղել:

Դժբախտ պատահարի փաստը բացառելով, դիմումատուն գտնում է, որ կատարվել է դիտավորյալ սպանություն:

#### **3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.**

Գործի քննությունն ավարտված է, երկու անձանց՝ մեկ սպայի, և մեկ զինծառայողի նկատմամբ առաջադրված մեղադրանքով կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, սակայն այն վերաբերում է զինծառայության նկատմամբ դրսևորած անփույթ վերաբերմունքին:

#### **4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.**

- Ն.Գալստյանի հագուստը քր. գործի նյութերից չի երևում որ հայտնաբերվել է, քանի որ հենց այդ հագուստի վրա կարող էին լինել պատռվածքներ, ընդհուպ արյան հետքեր,

- դեպքի վայրից ոչնչացրել են մի շարք իրեղեն ապացույցներ, իսկ դեպքի վայրում հայտնաբերված հակազագի մասով քննիչը որևէ անդրադարձ չի կատարել, պարզելու թե ումն է պատկանում այդ հակազագը, և ինչու է այդտեղ հայտնվել,
- քրեական գործի շրջանակներում Ն. Գալստյանի ծնողներին տուժողի իրավահաջորդ չեն ճանաչել, նույնիսկ քրեական գործի նյութերը նրանց տրամադրվել է համապատասխան վճարում կատարելուց հետո,
- չնայած գործով վկա Վլադ Ալավերդյանը ուղղակի կապ ունի նշված դեպքի հետ, սակայն քննիչը այդ փաստին չի անդրադարձել,
- հանգուցյալի քրոջ հարցաքննությունը տեղի է ունեցել քննիչի ուղղորդմամբ ու գրված է նրա կողմից առաջարկված նախադասությունները,
- մատնանշվել է կոնկրետ անձանց անուններ, որոնք կարող էին առնչություն ունենալ կատարված դեպքի հետ, սակայն քննիչը չի բավարարել իրենց պահանջը, այն է հրավիրել հարցաքննության,
- դեպքից մեկ ժամ անց, ժամ 03-ի սահմաններում զորամասի տարածքում է գտնվել քաղաքացիական հագուստով ինչ-որ անձ, սակայն, քննիչը փորձել է ներկայացնել, որ իրենց կողմից հնարավոր չի եղել պարզել այդ անձի ինքնությունը,

**5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.**

Ձեռնամուխ լինել մեղավորներին հայտնաբերելու և համարժեք պատիժ նշանակելու ուղղությամբ,

Ջորամասի սայական կազմի /պատասխանատուների/ գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով անցկացնել ծառայողական քննություն,


Նոր նյութեր նախապատրաստելու հիման վրա հարցաքննել բոլոր այն անձանց որոնք մատնանշվում են դիմումատուի կողմից, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել վերջինիս կողմից առաջ քաշված բոլոր հարցերն ու վարկածները:

**6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին**

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ դիմումատուի կողմից ներկայացված վարկածներն ու փաստերը մանրամասն քննարկման առարկա դարձնելու նպատակով:

*Ծանոթագրություն: Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:*

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԷՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝



ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝



ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

(Նարեկ Գալստյանի հորաքույրը)